

Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




Մի 22



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԵՄԻՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԴԱՄԱՐԻ

ԵՄԻՆՈՒԹՅԱՆ



ՅԱՆՎԱՐԻ ԵՄԻՆՈՒԹՅԱՆ



ԵՄԻՆՈՒԹՅԱՆ

ԵՄԻՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԴԱՄԱՐԻ



22

1899



ԵՄԻՆՈՒԹՅԱՆ

ԵՄԻՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԴԱՄԱՐԻ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԳԻՍ هانراکيداق HANRAKIDAGUE

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعة علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 22 || 31 ՄԱՅԻՍ 1903

ԾԱՂԿԱՎԱՋԱՌ

ԱՂԶԻԿԸ



ԾԱՂԿԱՎԱՃԱՌ ԱՂՋԻԿԸ

Ազնի՛ւ անցորդք, ծաղիկ աղուոր,
Ծախե աղջիկն հե՛զ չբխուր:

Հագիւ ծագած նըշոյջ աշուն՝
Թողում ընդոս իմ անոյշ փուն.
Քաղեմ խնամով Մայիսի վարդ,
Կապեմ փունջ փունջ կրծոց ի զարդ.
Իմ այս ծաղկունք եղեմաբոյր
Կարծես թէ եմ թիթեռանց փոյր:

Ազնի՛ւ անցորդք, ծաղիկ աղուոր,
Ծախե աղջիկն հե՛զ չբխուր:

Վարդեր ունիմ որ կը ծպտին,
Էւ շահոքրամ, շուք գեղեցիկն,
Յաւմիկ ալ կայ փուն զձիւն ճերմակ,
Կողովս անոյշ բուրե համակ
Դո՛ւ ալ զընե, կուսիկ զըւարթ,
Ո՞վ չը սիրեր ծաղկեայ մի զարդ:

Ազնի՛ւ անցորդք, ծաղիկ աղուոր,
Ծախե աղջիկն հե՛զ չբխուր:

Ահա՛ զաւեմ նարկիս, շուշան,
Ինձ համասի բարի՛ կուսան.
Թե շնորհեք երկու յումայ,
Հեզս ալ, Տիկի՛ն, ձեզ անուշակ
Ընտրեմ յանկիկն ու մանուշակ:

Ազնի՛ւ անցորդք, ծաղիկ աղուոր,
Ծախե՛ աղջիկն հեզ չբխուր:

Երբ այս գիշեր նստեմ սեղան,
Մեր քերւ մաղթանք պիտի տեղան.
Օրհնեա՛լ շինիք, ազնիւ ոգիք,
Պիտի ըսեմք, թիւապատիկ
Ասուած տայ ձեզ, որ կերակրեք
Երկու որք փոյր ու մայր մը հեզ:

Ազնի՛ւ անցորդք, ծաղիկ աղուոր
Ծախեմ աղջիկս՝ հե՛զ, չխուր:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂՋԻՅՆԵՐՈՒ ՎԱՐՔԱՐԱՆԻ ՄԷՋ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՄԵՐ ՆՄԱՆՆԵՐԸ, ԴԷՊԻ ԱՍՏՈՒԱԾ

9. — Մարդասիրութիւնը արդարութեան բով

Ձեր մայրը և իր դրացուհիներէն մէկը փոքրիկ հող մը գնեցին միասին, իւրաքանչիւրը վճարեց կէս գինը: Բայց այն գործաւորը, որ յանձն առած էր երկուսի բաժնել, կը սխալի և դրացիին բաժինը փոքր կը լինի: Ձեր մայրը, կ'անդրադառնայ, շուտով սխալը ուղղել կուտայ և դրացիին ինկած բաժինը անոր կը վերադարձնէ: Ձեր մայրը արդարութեան զգացումին կը հնազանդի, զոր սրտին մէջ ունի: Նա արգար է:

Սակայն, քանի մը տարի յետոյ դրացին բոլոր ունեցածը կորսնցուց: Մնաց միայն այն փոքրիկ հողը, որ իր ընտանիքին պիտոյքին չբաւեր: Շատ անգամ ձեր մայրը անոր կ'օգնէ ստակ կամ տղոցը համար հագուստ տալով: Կամ մէկուն կը յանձնարարէ, որ փոքրիկ գործեր տան: Ձեր մայրը մարդասէր է:

Տղաք, յիշեցէք որ արդարութիւնը միայն բաւական չէ ամէն մարդ երջանիկ ընելու համար: Արդարութեան մօտ՝ զոր մեզ կը ներշնչէ բանականութիւնը, դնենք մարդասիրութիւնը, զոր մեր սիրտը կը թելադրէ:

10. — Կարեկից լինի՞մք

Ձեր ծանօթներէն մին կրնայ մեծ դժբախտութեան մը հանդիպել: Ժամանակ մը վերջ երբ անոր հանդիպիք առիթ կ'ունենաք խօսելու, պէտք է շատ փափկութեամբ վարուիք եւ ըսէք, թէ իրեն վշտակից էք: Այն ժամանակ այն անձը, ձեր համակրութեանէն քաջալերուելով, տեղնի տեղը ձեզի կը պատմէ իրեն պատահած դժբախտութիւնը:

Քանի որ բաւական չէք ճանչնար զայն, պատմած շատ մանրամասնութիւնները ձեզ չեն հետաքրքրեր, բայց պէտք է համբերութեամբ լսել եւ նոյն իսկ երբեմն քաղցր խօսքեր աւելցնել:

Այնպէսով իր վշտացեալ սիրտը կ'սփոփուի, որովհետեւ կրնայ մէկուն խօսիլ որ կը հետաքրքրուի եւ իր վիշտը կը հասկնայ:

Այսպէս վարուելով, ճշմարիտ մարդասիրական գործ մը ըրած կը լինիք: Աստուծոյ մեզ հրամայած մարդասիրութիւնը չկայանար միայն ողորմութիւն ընելուն մէջ: Բաւական չէ ստակ տալ, Քաղցր խօսքեր ըսել: Պէտք է նաեւ գիտնալ ինքնիրեն հակառակիլ, քիչ մը նեղուիլ վշտացեալ սրտերը մխիթարելու եւ սփոփելու համար:

11. — Ողորմութիւն ըրէ', երբ կրնաս, բայց միշտ
մարդասէր եղիւր

Դպրոցի ճամբուն վրայ, կոյր ծերունի մը ողորմութիւն կը խընրէ: Սաստիկ տաք է. Խեղճ ծերուկը գլխաբաց մնացած է արեւին տակ, որովհետեւ հովը թռուցած էր գլխարկը, թէեւ ձեռքով ասդին անդին փնտռած էր, բայց չէր կրցած գտնել: Շատ աշակերտուհիներ քովէն կ'անցնին, փափաքելով ստակ տալ, բայց զրպաննին բան մը չունենալով տխրութեամբ կը հեռանան, որովհետեւ բոլորն ալ լաւ տղաք են: Բայց անոնցմէ մին, Մարի աւնունով, ինքնիրեն ըսաւ, «Այս ծերունիին ողորմութիւնը չեմ կրնար տալ, բայց ուրիշ կերպով կրնամ իրեն մարդասիրութիւն ցուցնել», եւ գետնէն վերցնելով կոյրին գլխարկը իրեն կուտայ, որ արեւի տաքութենէն այլ ևս չնեղուի:

Մարի լաւ հասկցաւ իր պարտականութիւնը: Ահա նեմարիս մարդասիրութիւնը, որ գիտէ խօսքով մը, գործով մը, մխիթարել նեղութեան մէջ զսնուողին: անոնց բարիք ընել և զգացնել, որ իրենց համար կը մտածեն:

12. — Բարեգործութիւն մը երբեք չի կորսուիր

Տիկին Մ. օգնեց իր դրացիներէն մէկուն Տիկին Ն.ին: Անոր գումար մը փոխ տալով նեղութենէ ազատեց: Տիկին Մ. առանց նեղուելու չէր որ ըրաւ այս օգնութիւնը, բայց անոր բան մը չյայտնեց, որ դիւրաւ ընդունի:

Բաւական ժամանակ անցնելէն ետքը Տիկին Ն. վերադարձուց փոխ ստացած դրամը, այժմ օգնութեան կարգը միւս տիկինով եկաւ: Բայց Տ. Ն. չկամեցաւ ստակ փոխ տալ իր դրացիին, որ երբեմն այնչափ բարի եղած էր իրեն համար: Տ. Մ. անոր քովէն հեռացաւ իւրովի ըսելով, թէ «յիմար խօսք մ'է, որ կ'ըսեն, թէ բարեգործութիւն մը չկորսուիր»:

Ձեր կեանքին մէջ շատ անգամ առիթ պիտի ունենաք Տ. Մ.ին պէս խորհելու, Բայց այնպէս մի՛ ըսէք, որովհետեւ այսպէսով պիտի վհատիք բարեգործութիւն ընելէ, Ընդհակառակը այսպէս ըսէք, ո՛չ, բարեգործութիւն մը չկորսուիր: Բարեգործութիւն ընողը շատ անգամ նիւթապէս չվարձատրուիր, շատ անգամ ապաշնորհներու կը հանդիպի, բայց բարիք գործելուն համար իր խիղճին մէջ հանգստութիւն, գոհունակութիւն մը կ'ունենայ. Իւրովի վայելած երջանկութիւնը բարեգործութեան վարձատրութիւնն է: Ահա ասոր համար կ'ըսուի թէ բարեգործութիւն մը երբեք չկորսուիր:

13.— Ամեն նւարտութիւն լաւ չե՛սք

— «Ես անկեղծ եմ, կ'ըսէ Մատլէն, ինչ որ խորհիմ, կ'ըսեմ: Այսպէս, Լիւսի քեզ տգեղ կը գտնեմ, Մարի, քեզ խելացի չեմ գտներ: Մարգարիտի հագուստները միշտ անյարմար են: Վարդուհին ստախոս է եւ Աննիկի ծնողքը կոշտ են ու հասարակ: Կը տեսնէք ձեզ չեմ չողոքորթեր, ճշմարտութիւնը կ'ըսեմ, որովհետեւ անկեղծ եմ:»

Լաւ, Մատլէնը յիմար է եւ այսպէս խօսելով բարի չէ: Այո՛, այս ամէնը ճշմարիտ է, բայց հարկաւոր չի անպէ՛տ տեսլ: Ի՞նչ բանի կը ծառայէ. ահա Լիւսին, Մարիին, Վարդուհին եւ Աննիկ շատ վշտացած են, որ իրենց ընկերն այս բաներն ըսած է, մանաւանդ գիտեն թէ Մատլէն այսպէս կը խորհի եւ միշտ այսպէս կը խօսի: Մատլէնը պարտականութիւն յանձն առած է իր ընկերները ուղղել, ազնուացնել, անոնց խրատել, յանդիմանել: Ո՛չ, ուրեմն թող լռէ, որովհետեւ եթէ այս սովորութիւնը չփոխէ՝ ոչ մէկ բարեկամ կ'ունենայ: Միայն այն ատեն նրա նւարտութիւնը քիչ երբ բացարձակապէս պարտաւորուած էք ըսել:

14.— Երբեք իրաւունք չունիք խաբելու

Վերգինէ լաւ տնտեսագէտ եւ տնարար է ու ընտանիքին շահերը կը պաշտպանէ, բայց ափսոս, որ իր եռանդը երբեմն զինք շատ հեռուն կը մղէ եւ անցեալ օր փորձութենէ մը յաղթունեցաւ: ձեզ պիտի պատմեմ: Մտավաճառէն գնում մ'ըրած էր, հասարակ մտավաճառ մը, որուն խիղճը շատ մաքուր չէր, եւ շատ անգամ իր վաճառքին արժեքէն աւելի առած էր: Օր մը հաշուին մէջ սխալելով տասնոց մը պակաս հաշուած էր «տասնոց մը, բան մը չէ, ըսած էր ինքնիրեն հաշիւը ստուգելով... շատ ան-

գամ ինձմէ աւելորդ տասնոց առած է: Այս տասնոցը կը պահեմ, իմ շանս է,» եւ չվերադարձուց:

Ի՞նչ կը խորհիք այս մասին: Ես ամէն պատուաւոր մարդու հետ կըսեմ թէ Վերգինէ անիրաւ էր: Մեր անձնական շահը պիտի չփնտնենք երբ առաքինութեան դեմ է: Նոյն իսկ տասը փարան պիտի չիւրացնենք, եթէ իրաւունք չունինք: Ես այսպէս կը խորհիմ, կարծեմ ձեր կարծիքն ալ այս է, այնպէս չէ՞, թէ Վերգինէ պարտ էր մնալաճառին տասնոցը վերադարձնել: Ուովնե՛սեւ անգամ մը խաբուած քլալուն համար իրաւունք չէ խաբելը:

ՓՈՒՇ-ՎԱՐՊ

(Ա Ի Ա Ն Դ Ա Վ Է Պ)

Շատ ժամանակ առաջ ազնուական եւ հարուստ գիւղատէր մը ու իր տիրուհին կային, որոնք ամէն օր կ'ըսէին.

— Ա՛խ, երանի՜ թէ զաւակ մը ունենայինք:

Դժղաղդաբար իրենց բաղձանքին չէին հասներ խեղճերը: Ու եղաւ որ, անգամ մը, երբ տիրուհին լողանք կ'ընէր, խեցգետին մը գլուխը դուրս հանեց ջուրէն եւ ըսաւ անոր.

— Գու բաղձանքդ պիտի կատարուի, տարի մը չանցած՝ աղջիկ մը պիտի ունենաս:

Ինչ որ խեցգետինը գուշակած էր, կատարուեցաւ: Տիրուհին այնքա՛ն գեղեցիկ աղջիկ մը աշխարհ բերաւ որ իր ամուսինը, չափազանց ուրախացած, մեծ կոչունք մը տուաւ: Ան ո՛չ միայն իր ազգականները, բարեկամներն ու ծանօթները հրաւիրեց, այլ նաեւ պարիկները, որպէս զի մանկան հաշտ եւ նպաստաւոր աշքով մը նային անոնք: Իր երկրին մէջ տասներեք հատ կային այս կիներէն, բայց որովհետեւ ինքը միայն տասներկու ոսկեայ պընակ ունէր, ուրկէ պիտի ուտէին, ստիպուեցաւ անոնցմէ մին չի հրաւիրել: Անոնք որ հրաւիրուած էին, եկան. խնճոյքը շատ չըքեղ եղաւ, ուրկէ ետքը պարիկներէն իւրաքանչիւրը իր հրաշալի ձիւքերով օժտեց նորածինը, — մին՝ առաքինութեամբ, միւսը՝ գեղեցկութեամբ, երրորդը՝ հարստութեամբ, վերջապէս այն ամէն յատկութիւններով, զորս այս աշխարհի մէջ կարելի է ունենալ: Երբ արդէն պարիկներէն տասնեմէկը իրենց պարգեւներն ըմբոշխնած էին, ներս մտաւ տասներեքերորդը որ չէր հրաւիրուած եւ այս պատճառաւ վրէժ լուծել կ'ուզէր: Առանց մէկը բա-

րեւելու, կամ մէկու մը վրայ ձգելու իր ականարկը, դէպի մանկան օրրանը յառաջացաւ ան և գոչեց:

— Այս աղջիկը տասնեւհինգ տարեկան ըլլալուն պէս մանարանի շամփրակով մը պիտի վերաւորուի և անմիջապէս մեռնի:

Ասոր վրայ սրահէն դուրս ելաւ: Ներկաները բոլորն ալ ահ ու սարսափի մէջ ինկած էին: Այն ատեն մօտեցաւ տասներկուերորդ պարիկը, որ դեռ իր նուէրը չէր ըրած. իրաւ է որ չէր կրնար չարաշուք վճիռը բեկանել, բայց կարող էր գեթ մեղմացնել զայն:

— Ազնուականին դուստրը չպիտի մեռնի, ըսաւ, այլ հարիւրամեայ խոր քուսի մը մէջ պիտի խնայ:

Ազնուականը սակայն, դեռ յուսալով իր սիրելի զաւակը զերծ պահել այս սպառնալիքէն, հրաման հանեց որ իր գիւղին մէջ գտնուող շամփրակները բոլորն ալ ջնջուին: Գալով աղջկան, անիկա պարիկներու ամէն ձիրքերն ալ ստացաւ, քանզի այնքան գեղեցիկ, բարեկիրթ, քաղցրաբարոյ և ուշիմ էր, որ տեսնողները բոլորն ալ կը սիրէին զայն:

Ու եղաւ որ ճիշտ այն օրը, երբ օրիորդը տասնեւհինգ տարեկան պիտի ըլլար, ծնողքը բացակայ էին: Աղջնակը մինակ մնացած ըլլալով տպարանքին մէջ ամէն կողմ պտըտեցաւ, յարկաբաժիններն ու սենեակներն աչքէ անցուց և վերջապէս հին աշտարակի մը քով հասաւ: Նեղ սանդուղ մը կը բարձրանար անոր մէջէն, որու ծայրը փոքրիկ դուռ մը կը գտնուէր: Կղպանքին վրայ դեղին բանալի մը կար. օրիորդը դարձուց զայն և դուռը բացուեցաւ: Փոքր սենեակի մը մէջ, պառաւ կին մը փոյթեռանդ իր վուշը կը մանէր:

— Ա՛յ, ծեր մայրիկ, ի՞նչ կ'ընես հոգ, հարցուց աղջիկը:

— Կը մանեմ, պատասխանեց պառաւը գլուխը երեւցնելով:

— Որքա՛ն արագ կը դառնայ այդ ճախարակը, ըսաւ օրիորդը և շամփրակին մօտենալով ուղեց ինքն ալ մանել: Բայց հագիւ թէ հպած էր գործիքին որ կախարդ կնոջ խօսքը կատարուելով՝ մատէն վերաւորուեցաւ և թմրած՝ ինկաւ անկողինի մը վրայ որ հոն կը կենար: Ազնուականն ու իր կինն ալ որ այդ միջոցին տուն կը վերադառնային. իրենց ծառաներով միասին սկըսան քնանալ: Քնացան նաեւ ձիերը՝ ախոռին մէջ, շուները՝ բակին մէջ, աղաւնիները տանիքին և ճանձերը պատերուն վրայ. նոյն իսկ կրակը որ օճախին մէջ կը ճարճատէր՝ մարեցաւ և խոլովածը դադրեցաւ եփելէ: Խոհարարը որ իր անհնազանդ սպասուորին ականջները քաշել կ'ուզէր, ազատ ձգեց զայն և քնա-

ցաւ: Վերջապէս կենդանութեան բոլոր նշանները դադարեցան եւ խոր լուութիւն մը տիրեց ամէն կողմ:

Ու դղեակին շուրջը փշեայ ցանկ մը սկսաւ աճիլ եւ տարուէ տարի բարձրանալով վերջապէս ամբողջ չէնքը ծածկեց, այնպէս որ տանիքէն վեր բարձրացող ժամացոյցի աշտարակն իսկ չէր տեսնուեր: Միեւնոյն ժամանակ շատ մը գրոյցներ սկսան շրջիլ Փուշ-Վարդին վրայ — այսպէս կը կոչուէր քնացող գեղեցկուհին — եւ ատեն ատեն կտրիճ աղնուականներ կուգային ցանկը ճեղքելով դղեակ մտնելու: Բայց չէին յաջողեր, որովհետեւ փուշերը իրար կը սեղմուէին այնպիսի ուժգնութեամբ որ խեղճերը անոնց ճանկերուն մէջ բռնուելով չարաչար կը մեռնէին:

Երկա՛ր, շատ երկար տարիներ անցան, աղնուականի տղայ մըն ալ եկաւ այն կողմերը: Ծերունի մը տեղեկութիւններ սուռաւ անոր փշէ ցանկին վրայ, ըսելով թէ անոր տակ դղեակ մը կար ծածկուած, որուն մէջ հիանալի գեղեցկութեամբ աղջիկ մը Փուշ-Վարդ անունով, իր բոլոր ընտանիքով կը քնանար: Պատմեց նաեւ թէ իր մեծ հօրմէն լսածին համեմատ շատ մը երիտասարդներ եկած են ցանկէն անցնիլ փորձելու. բայց ամենքն ալ քրտամնելի մահով մը մեռած են:

— Ատիկա չէ կարող հաւաքելիլ զիս, ըսաւ կտրիճ տղան. ես ալ պիտի աշխատիմ ներս մտնել, քնացող գեղեցկուհին տեսնելու համար:

Ծերունին շատ աշխատեցաւ որ ետ կեցնէ զայն իր դիտաւորութենէն, բայց ի զուր: Սակայն դիպուածն ալ այնպէս բերաւ որ տղուն եկած օրը հարիւր տարին կը վերջանար. այնպէս որ երբ երիտասարդը ցանկին մօտեցաւ, փուշերու տեղ բարձր ու գեղեցիկ ծաղիկներ գտաւ իր առջին որոնք ինքնաբերաբար անցք մը բացին, ուրկէ ներս մտաւ: Իր ետեւէն ցանկը դարձեալ գոցուեցաւ:

Բակին մէջ ձիերն ու որսորդական խատուտիկ շուները դեռ կը քնանային: Տանիքին վրայ, գլուխնին թեւերնուն տակ ծածկած, աղանթները կը նստէին անշարժ: Տանը դռնէն ներս մըտնելով տեսաւ որ ճանճերը, պատերիւն վրայ փակած տեղերնուն չէին երերար: Խոհանոցին մէջ խոհարարը դեռ վեր բռնած էր ձեռքը, կարծես թէ հէնց ապտակել կ'ուզէր իր սպասաւորը: Ուրիշ անկիւն մըն ալ սպասուհին կիսկատար թողած էր սեւ հաւ մը զոր կը փետտէր: Աւելի առաջ երթալով տեսաւ որ բոլոր սպասաւորները կը ննջեն, ու քիչ մը անդին գտհաւորակի մը վրայ, աղնուականն ու կինը: Մեռելական այդ լուութեան մէջ երիտասարդը շարունակելով իր փնտառութիւնը վերջապէս հասաւ աշտա-

բախին ստորոտը եւ սանդուղէն վեր ելլելով փոքր սենեակին գուռը բացաւ։ Օրիորդը պառկած էր հոն և ա՛յնքան գեղեցիկ էր որ տղան, խորին սքանչացման մէջ, ծռեցաւ և համբուրեց զայն։ Իր շրթունքներուն հպումէն Փուշ-Վարդ արթնցաւ, բացաւ աչքերն ու սիրալիր ականարկ մը ձգեց երիտասարդին վրայ։ Յետոյ վար իջան միասին։ Այն ստեն արթնցան նաեւ հայրն ու մայրը իրենց սպասաւորներով և զարմացած իրարու նայեցան։ Ձիերն ալ ոտքի ելան բակին մէջ և սկսան թօթուրտիլ։ Բարակները ցատքեցին իրենց տեղէն հաչելով և տանիքին վրայ աղաւնիները գլուխնին հանեցին թեւերնուն տակէն ու ականարկ մը ձգելով շորս կողմերնին՝ դէպի դաշտերը թռան։ Պատին վրայ ճանճերը շարուեցան, կրակը բոցավառեցաւ օձախին մէջ և խորովածը վերստին սկսաւ եփիլ։ Խոհարարը այնպիսի փառաւոր ապտակ մը իջեցուց սպասաւորին որ խեղճը ցաւէն պօռաց, իսկ սպասուհին ալ հաւը փետտեց լմնցուց։

Այն ստեն չքեղ կերպով կատարուեցաւ երիտասարդին ու Փուշ-Վարդին հարսնիքը։ Եւ անոնք մինչեւ իրենց մահը խաղաղ ու երջանիկ ապրեցան։

Թրգմ. Գերմաներէնէ

ԱՐՄԷՆ ՅԱՐԶԱՏ

ԲԱՐՈՅԱՎԷՍ

Ն Ե Լ Լ Օ Ն

Ե Ի

Պ Ա Տ Ք Ա Շ Ը

Ե .

— Այսօր Ալօիդի անուանակոչութեան տօնն է, այնպէս չէ՞, ասաց ծերունի Յովհաննէսը, որ պառկած էր սենեակի մի անկիւնում։

Տղան գլխով արեց, բայց նա աւելի ուրախ կը լինէր եթէ ծերունին ամենեւին չլիչեր այդ օրուայ մասին։

— Ինչո՞ւ դու էլ չես գնացել, Նելլօ, շարունակեց պապը, չէ՞ որ ամէն տարի դնում էիր։

— Դու հիւանդ ես, և ես չուզեցի քեզ միայնակ թողնել, չչնջաց տղան, կախ գծելով իւր գեղեցիկ գլուխը։

— Է՛հ, դա ի՞նչ պատճառ է. հորաքոյրդ կը գար և մօտս նստէր, ինչպէս շատ անգամ անում է, երբ դու տանը չես լինում: Ի՞նչ է պատահել, Նելլօ, չլինի՞ թէ կռուել ես փոքրիկ Ալօիզի հետ:

— Ո՛չ, պապիկ, ընդհատեց տղան սաստիկ կարմրելով. ուղիղն ասած՝ կօգէզը այսօր ինձ չէ հրաւիրել. նա ինչ-որ հետս լաւ չէ:

— Մի վատ բան խօսմ չէ՞ս արել:

— Կարծեմ ոչինչ. ես մի անգամ նկարել եմ Ալօիզի պատկերը տախտակի վրայ, ուրիշ ոչինչ:

— Ըհ՛ը...

Ծերունին ամէն բան հասկացաւ: Նա թէեւ պառկած էր չոր տերեւներից շինած անկողնում բայց չէր մոռացել մարդկանց բամբասանքը: Նա քնքշութեամբ սեղմեց իւր կրծքին Նելլօի գանգրահեր գլուխը և դողդոջուն ձայնով ասաց.

— Դու շատ խեղճ ես, որդիս... սիրտդ շատ է վշտացած:

— Ո՛չ, ես հարուստ եմ. շնչաց Նելլօն: Եւ իսկապէս այդ չընորհալի տղան իւր մէջ զգում էր մատաղ հանճարի ոյժը եւ իրան հարուստ էր համարում:

Նա դուրս եկաւ և խրճիթի դրանը կանգնած՝ նայում էր աստղազարդ երկնքին և թեթեւ փամուռ տատանւող բարձր սօսիներին. աշնանայրն խաղաղ գիշեր էր:

Ջաղացի բոլոր պատուհանները լուսաւորուած էին, եւ այնտեղից Նելլօի ականջին հասնում էին սրնգի հնչիւնները. Արտասուքի խոշոր կաթիլները գլորւում էին նրա աչքերից, բայց նա դարձեալ ժպտում և ասում էր. «յետո՛յ, յետո՛յ»:

Նա այնքոն ժամանակ կանգնեց դուրսը՝ մինչեւ որ ջաղացում մթնեց եւ ձայները դադարեցին:

Այն ժամանակ միայն Պատրաշի հետ ներս մտաւ եւ միասին քաղցր քնեցին:

2.

Նելլօն մի գաղտնիք ունէր, որ միայն Պատրաշին էր յայտնի: Խրճիթին կից մի փոքրիկ շինութիւն կար, ուր միայն Նելլօն էր մտնում. մի տխուր եւ անշուք տեղ էր այն, բայց հիւսիսային կողմից պայծառ կերպով լուսաւորուած: Այն տեղ նա շինել էր մի փայտէ գրակալ եւ հասարակ գորշագոյն թղթի վրայ նկարել էր իւր անթիւ երեւակայութիւններից մինը: Ոչ ոք նրան բան չէր սովորեցրել. ներկեր գնելու նա ո՛չ մի հնար չուներ եւ շատ անգամ իրան զրկում էր հացից, որ գոնէ թուղթ կարողանայ

գնել: Նա նկարում էր միայն սև կամ սպիտակ գոյնով, նեյլօն կաւիճով նկարել էր մի ծեր փայտահատ՝ նստած ծառի կոճղին: Նա շատ անգամ տեսել էր իրանց հարեւան Միքայէլին այս ձեւով նստած երեկոներին:

Թէպէտ նեյլօն չէր սովորել եւ չգիտէր օրինաւոր նկարել՝ բայց եւ այնպէս այդ նկարը շատ սիրուն դուրս էր եկել: Ծեր Միքայէլը կարծես կենդանի նստած լինէր, նրա յոգնած ու կնճռոտ դէմքը տխրութիւն էր արտայայտում: Այնտեղ երեւում էր մի երկարատեւ կիանք՝ ծանրաբեռուած դառն աշխատանքով, միայնակ ծերութեամբ, չարչարանքով եւ համբերութեամբ... պատկերը ներկայացնում էր գիշերային վերահաս խաւարը:

Պատկերը թէեւ կոպիտ էր նկարած և շատ պակասութիւններ ունէր, բայց այնուամենայնիւ նա կենդանի էր և գեղեցիկ, ինչպէս ինքը կեանքը: Նեյլօն յոյս ունէր, գուցէ մի անիրագործելի յոյս, որ իւր նկարն ուղարկէ միջման հանդէսը: Այդ ժամանակ յայտարարուած էր որ ամեն մի տաղանդաւոր տղայ, տասնեութ տարեկանից փոքր, կարող է ներկայացնել իր ինքնուրոյն աշխատանքը՝ կաւիճով կամ մատիտով նկարած և ամենալաւ նկարի հեղինակը կը ստանայ երկու հարիւր ֆրանկ պարգեւ: Մայրաքաղաքից երեք ամենալաւ նկարիչներ էին հրաւիրուած ուղարկուելիք նկարները քննելու:

Ամբողջ գարունը, ամառն և աշունը նեյլօն աշխատում էր այդ նկարի վրայ: Նա գիտէր որ եթէ այդ նկարը յաջողակ դուրս գար՝ ինքը հարստութեան առաջին քայլը արած կը լինէր եւ այդպիսով հնար կ'ունենար սովորել իւր սիրած արուեստը:

Այս մասին նեյլօն ոչոքի բան չէր ասում, պապը նրան չէր կարող հասկնալ, իսկ փոքրիկ Ալօիզան կորած էր նրա համար: Նրա գաղտնիքը յայտնի էր միայն Պատրաշին, որ միշտ ներկայ էր լինում էր նրա պարապմունքին:

Նկարները պիտի նըրկայացուէին դեկտեմբերի մէկին, իսկ վճիռը պիտի յայտարարուէր նոյն ամսի քսանեւչորսին, այնպէս որ յաղթանակ տանողը ուրախ սրտով կանցկացնէր տօները:

Ձմեռային ցուրտ երեկոյ էր: Նեյլօն յուսով և երկիւղով իւր մեծ նկարը դրեց փոքրիկ կանաչագոյն սալակի վրայ, Պատրաշին լծեց և քաղաք տարաւ ու դրեց քաղաքային շինութեան դռների մօտ՝ ինչպէս որոշուած էր: «Գուցէ իմ նկարը բանի էլ պէտք չէ» մտածում էր նա տխրութեամբ և իւր արածն անմտութիւն էր համարում: Չէ՞ որ ինքը մի խեղճ, ոտաբորիկ ու անգրագէտ տղայ էր, ինչպէս կարող էր այնպիսի նկար արտադրել, որ արժանի լինէր այն մեծ նկարիչների ուշադրութեանը:

Փոքր ինչ սրաազնդուելու համար Նելլօն մտաւ եկեղեցի։ Մթութեան մէջ նրան այնպէս թուեց, իբր թէ Ռուբէնսի ստուերը երեւաց և իրան ասում էր. « Ով ուզում է մեծ դառնալ՝ պէտք է համարձակ լինի » :

Նելլօն մխիթարուած տուն դարձաւ. նա ինչ որ կարող էր արաւ, մնացեալը թողեց Աստուծոյ կամքին։ Խստաշունչ ձմեռ էր։ Երբ Նելլօն տուն հասաւ՝ գիշերն սկսեց ձիւն գալ և մի քանի օր շարունակ գալիս էր։ Դաշտի միջի բոլոր ճանապարհներն ու շաւիղները ծածկուեցան, գետը սառեցաւ, և ցուրտը քանի գնում աստկանում էր։ Լիյդ ժամանակ կաթ տանելն էլ դժուարացաւ. դժուար էր մանաւանդ ծեր Պատրաշին. նրա ոսկորները ցաւում էին, բայց նա երբեք աշխատելուց խոյս չէր տալիս։ Նելլօն երբեմն կամենում էր նրան օգնել և ինքն էր քաշում սայլակը, բայց Պատրաշն ընդդիմանում էր։ Միակ օգնութիւնը, որ չունը ընդունում էր նրանից՝ այն էր, որ երբ սայլակը դժուարութեամբ էր շարժւում՝ սառցապատ ճանապարհով՝ Նելլօն ետեւից հրում էր։

— Պատրաշ, դու մնա՛ տանը, հանգստացիր, իսկ սայլակը ինքս կը քաշեմ, — շատ անգամ ասում էր Նելլօն։ Բայց Պատրաշը գալիս կանգնում էր լծակի մէջ և քաջութեամբ քաշում էր ձիւնապատ դաշտերով։

« Ոչ ոք չպիտի հանգստանայ, քանի որ կենդանի է », մտածում էր Պատրաշը, և երբեմն նրա թւում էր, որ չուտով նրա հանգստանալու ժամը պիտի հասնի։ Նրա տեսողութիւնը թուլացել էր. առաւօտները դժուարութեամբ էր արթննում. բայց սա նրան չէր խանգարում, նա դարձեալ առաւօտները վաղ վեր էր կենում իւր յարդէ անկողնից և աշխատանքի գնում։

— Խեղճ Պատրաշ, թէ ես և թէ դու չուտով կը հանգստանանք գերեզմանի մէջ, մի անգամ ասաց ծերունի Յովհաննէսը, Պատրաշի գլուխը շոյելով։ Նրանք երկուսն էլ միեւնոյն ցաւն ունէին սրտերում, թէ արդեօք իրանց մահից յետոյ ո՞վ պիտի խրանամէ իրանց սիրելի Նելլօին։

— Խեղճ Պատրաշ, թէ ես և թէ դու չուտով կը հանգստանանք գերեզմանի մէջ, մի անգամ ասաց ծերունի Յովհաննէսը, Պատրաշի գլուխը շոյելով։ Նրանք երկուսն էլ միեւնոյն ցաւն ունէին սրտերում, թէ արդեօք իրանց մահից յետոյ ո՞վ պիտի խնամէ իրանց սիրելի Նելլօին։

է.

Մի անգամ Նելլօն Պատրաշի հետ տուն վերադառնալիս՝ ձիւնապատ ճանապարհի վրայ գտաւ մի տիկինիկ՝ ոսկեթել ասեղնանկար շորեր հագին։ Դա մի սիրուն խաղալիք էր . և որովհետեւ Նելլօն չկարողացաւ տիրոջը գտնել՝ վճռեց Ալօիզին ընծայել։



Երբ նա ջաղացին մօտեցաւ՝ մութը բոլորովին ընկել էր։ Նա մօտեցաւ Ալօիզի փոքրիկ պատուհանին և կամաց բաղխեց։ Աղջիկը վախեցած բաց արեց պատուհանը եւ Նելլօն տուեց գեղեցիկ տիկինիկը նրան ասելով.

— Ես այդ գտայ ձիւնի մէջ, Ալօիզա, ա՛ռ, քեզ լինի։ Դէ՛, մնաս բարով։

Եւ նա իսկոյն անյայտացաւ գիշերային մթութեան մէջ, այնպէս որ Ալօիզան չկարողացաւ գոնէ շնորհակալութիւն յայտնել նրան։

(Շարունակելի)

ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ ՈՒՐԱԿԱՆ

Երեւակայեցէք կարմիրուակ երեւոյթով մը ու սոսկալի մերկութիւնով աւազուտ երկիրներ, ձմեռի անձրեւներէն հերկուած ու ամառի կրակներէն այրած: Տեղ տեղ մինակ փշտ նոպալիներ կը ծածկեն անսահման աւազի պզտիկ մաս մը. այն շինուած անտառներէն հովը կ'անցնի չկրնալով անոնց աննկուն ճիւղերը ծռել. հոս ու հոն քարացած ամաններու կտորուանքներ կը սոսկացնեն նայուածքները ու իրարմէ պարբերաբար հեռու բարձրացող քարի կոյտեր կարաւաններու ճամբան ցուցնելու կը ծառայեն: Ամբողջ օր մը այս աւազի դաշտին մէջ քալեցինք: Անցանք



ուրիշ լեռնաշղթայ մը եւ գտանք երկրորդ դաշտ մը առաջինէն աւելի ամայի ու ընդարձակ:

Գիշերը եկաւ: Լուսինը կը յուսաւորէր թափուր անապատը. անստուեր մեծութեան լը վրայ մինակ մեր ուղտին անշարժ ու վիթերու քանի մը երամակներու փախչող շուքը կը նշմարուէր: Լուսթիւնը վարագներու աղմուկը միայն կը վրդովէր՝ որ կը փռէին չորացած արմատներ ու ձգրիթի երգը՝ որ պարապ տեղը այս անմշակ աւազին մէջ կը փնտռէր հողագործին օճախը:

Դադրեցուցինք մեր ճամբորդութիւնը յուսնալէ առաջ: Արեւը ծագեցաւ իր ճառագայթներէն մերկացած, չէկ երկաթի խուրձի մը պէս: Ամէն վայրկեան տաքութիւնը կ'աւելնար: Յորեկուան ժամը երեքի ատենները ուղտը սկսաւ տաքնապի նշաններ ցուց-

ցընել, ռունգերը աւազին մէջ կը խօթէր եւ կատաղութեամբ կը հեւար: Մերթ ջայլամին չարագոյժ ձայնը կը սուլէր, օձերն ու ու գետնառիւծները երկրին ծոցը մտնելու կը փութային: Տեսայ առաջնորդը որ երկինքը կը դիտէր ու կը տփգունէր. հարցուցի անոր իր սոսկումին պատճառը. « Կը վախնամ կէսօրի հովէն, ըսաւ, ազատինք »:

Դէմքը հիւսիս դարձնելով, իր ուղտերը բոլոր արագութեամբ վազցուց. սաստիկ հովը որ մեզ կ'սպառնար՝ մենէ աւելի թեթեւ էր. Յանկարծ անապատի ծայրէն վազեց չըջըջիկ մըրիկ մը: Գետինը մեր ոտքերուն տակէն կը փախէր, մինչդեռ աւազի ուրիշ սիւններ, մեր ետին բարձրացած, կը պտուտկէին մեր գլխուն վերեւ: Իրարու նման ու շարժուն բլրակներու լաբիւրինթոսի մը մէջ մոլորած, առաջնորդը յայտնեց ինձ թէ այլեւս իր ճամբան չճանչնար. մեր ձախորդութիւնը լմնալու համար, մեր վազքին արագութեանը մէջ, ջրով լեցուն տիկերուն ջուրը թափեցաւ: Նուաղեցնող ծարաւէ մը շնչասպառ, մըրկած բոցեր շնչելու վախէն մեր շունչը սաստիկ բռնած, քրտինքը առուակի պէս կը հոսէր մեր նկուն անդամներէն: Ուրականը կը կրկնապատկէ իր կատաղութիւնը, կը փորէ աւազը մինչեւ երկրի հին հիմերը եւ կը ցրուէ երկինքի մէջ անապատին այրող փորձութիւնները: Կրակ կտրած աւազի մթնոլորտի մը մէջ թաղուած, տեսութենէս կը կորսուի առաջնորդը. անմիջապէս կը լսեմ իր ազաղակը կը վազեմ դէպի ձայնը, խեղճը կրակի հողմէն խարկուած. աւազին վրայ մեռած ինկեր էր և իր ուղտը աներեւութացեր էր:

Պարապ տեղը փորձեցի վերակենդանացնել դժբաղդ ընկերս. իմ ճիգերս անօգուտ եղան: Զիս սանձը ձեռքս բռնած նստեցայ քչիկ մը. չյուսալով երբէք թէ այս Ոգարիաի հնոցին կրակներուն պիտի յաջորդէ զով հովիկ մը ու մեղմ սիւգ մը: Կակիայ մը որ խորտակուեր էր, հոս իմ պատսպարանս եղաւ. այս տկար պատնէչին ետին, փոթորիկին վախճանին սպասեցի: Իրիկուան դէմ հիւսիսի հովիկը սկսաւ փչել. օդը կորսնցուց իր եռուն տաքութիւնը, աւազները թափթփեցան երկինքէն և թողուցին որ լուսաւորները տեսնեմ. անօգուտ ջահէր որ սոսկ անապատին անհունութիւնը ցուցուցին ինձ:

Խրգմ. ՄԱՆՆԻՍԵ
Հիւսէյնիկ

ՇԱԹՈՐԻԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՄԷՉ

ԿՐԹԱ-ԿՐՕՆԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժանսեհիզով. — Այս միաբանութեան հիմնադիրն է Պելճի-գացի ժանսէնիւս եպիսկոպոսը (1585-1638): Աստուածաշնչական ու հայրապետական գրուածքներու վրայ մեծ ոյժ թափեց. մասնաւոր ուսումնասիրութեան նիւթ ըրաւ Ս. Օգոստինոսի երկերը: Իբր գլուխ գործոց Օգոստինոս անուն հեղինակութիւն մը թողուց որ իր հաստատած դպրոցին վառարանը հանդիսացաւ: Այս գիրքը քանի՞ քանի անգամներ բանադրուեցաւ իբր հակակրօն գործ:

Ժանսէնիզթներ՝ բոլորովին հակոտնեայ էին Ժէզուիթներուն, որոնց հետ շատ անգամ տաք և կռոււտող վիճաբանութիւններ ունեցած են: Արնօլտի, Նիքօլի, Բասքալի, Լալլեններու նման մեծանուն գիտնականներ՝ իրենց համամիտ գտած են: 1670ին Հռլանտայի Սթրէխտ գաւառին մէջ հաստատուեցան, ուր մինչեւ այժօր կը գործեն, և նոյն նահանգին Ամէրսֆուրթ քաղաքին մէջ համալսարան մը ունին:


Ժանսէնիսթներու հիմնած դպրոցները կարեւորութենէ զուրկ չեն: Ասոնք էին որ առաջին անգամ մայրենի լեզու սորվեցնել սկսան կաթողիկ երկիրներու մէջ, մինչդեռ միւս դպրոցները Լատիններէն կ'աւանդէին: Գոմէնիւս՝ նշանաւոր ժանսէնիսթ մը, կ'ըսէ. « Մայրենի լեզուն սորվելէ առաջ Լատիններէն ուսուցանելը կը նմանի անոր որ քալել գիտնալէ առաջ ձի հեծնալու վարժութիւնը կ'ընէ »: Ասոնք՝ հեգել սորվեցնելու ատեն, նախ գրերուն բնական ձայները հանել կուտային և ապա անոնց անունները կը հնչեցնէին: Մեթուս մը որ հիւս բոլոր բարւոք մանկանոցներուն մէջ կը տիրէ: « Վազող ձիուն սանձը չեն քաշեր » ի սկզբունքը իրենց սկզբունքն էր. որ եւ է սղայ որ եւ է ուղղութեամբ երբ յառաջացում մը ցուցնէր, անոր քայլերուն առջեւ խոջ չէին դնէր: Մտքին ճամբան իրենք չէին որոշեր, այլ միտքը իր ուղին կը բանար. իրենք՝ իմացականութեան սոսկ թելադրիչ մը և հսկիչ մը կը կանգնէին. ուղղակի մտքին զիմելէ առաջ կը մօտենային անոր հեռագրաթիւքերուն (զգայարաններուն) որպէս զի անոնցմով հաղորդէին գաղափարները Դպրոցավարին գործիներն էին համբերութիւն, արթնութիւն եւ մեղմութիւն: Բիշ խօսիլ, շատ համբերել և ամէնէն շատ աղօթել. ահա ժանսէնիզովի խրատը: Ծրգնաւորական կեանքը իրենց ընդհանուր յատկանիշն էր. բայց, ինչպէս ըսի, մտքի զարգացումի համար խնդիրը կը տարբերէր: Աշխարհի եւ կեանքի համար լատտեսներ չէին. իրենց յոռետեսութիւնը՝ անվստահութիւն մը գոյացուցած էր հանդէպ մարդկային բնութեան:

ՖԵՆՐԼՈՆ

Ֆենրլոն (1651-1715) ապրած է կեանքի թատերարեմին վրայ բառական կարեւոր, ուշագրաւ և օգտաւէտ դերեր խաղալով: Ֆրանսական մատենագրութեան, դաստիարակութեան և խորհող գանկերու շարքին մէջ լուսնափայլ անուն մը թողուցած է: Քէմպրէի սա եպիսկոպոսը իր դաստիարակութիւնը առաւ Բարիգի ժէզվիդներու դպրոցին մէջ: 1675-1685, միաբանութեան մը գլուխ հրաւիրուեցաւ որպէս զի իգական սեռը պաշտպանէ բողոքական գաղափարներու տպաւորութենէն: այս միջոցին գրեց իր Աղջկանց Դաստիարակութիւնը անուն երկը, որուն մէջ առողջ ըսկզբունքներ, և յառաջացնող դրութիւններ անպակաս են: իր համոզումներուն մէջ գաղափարներ կան որոնք մշտնջենի ըլլալու հանգամանքը ունին: Մանուկին միտքը կը նմանցնէ վառող մոմի մը որուն բոցը տատանուն է, և դաստիարակին պարտքն է վայն պաշտպանել և չէ թէ ճնշել: Մտքի բացարձակ տկարութիւնը չընդունիր, այլ կեդրոնաձիգ ուշագրութեան անդօրութիւնը, որը զօրացնելու համար պատանիին բնական հետաքրքրութեան թելը գտնելու, հպելու և շարժելու է: Անձանձրոյթ պատասխանելու է բոլոր հարցերուն որոնք պատանիին մատղաշ մտքերէն կը բղխին: Տեղեմաքի մեծանուն հեղինակը՝ հոգեբանութեան օրէնքները աշխարհին առջեւ դրած, կը պատուիրէ սորվեցնողներուն որ մտքի հետ գործած ատեննին փոխանակ անոր խոռոչները թխելու պատկերներն ու ծանօթութիւնները, մեղմիկ հպանցներով շարժեն զանոնք և ուսնեցնեն գաղափարները անոնց մէջ: Զգալով թէ զուարթութիւնն ու զուարճալին որքան դեր կը խաղան մտքի փթթումին մէջ, կը պատուիրէ և կը պահանջէ որ դաստատուները զուարթ և քաղցր դէմք մը և հանգամանք մը ունենան դասարանին մէջ: Իրենց դասերը զբօսալի խաղերով և խնդրանքներով համեմատ ըլլան: Խաղը՝ ուսուցում, եւ ուսուցումը՝ խաղ, ահա այս վարպետին թելադրութիւնը: Թելադրութիւն մը որ արդիւնքը ըլլալ կ'երեւի, Միջին դարու դաստիարակութեան յոռի ուղղութեանը ըմբռնումին: ուղղութիւն մը որուն մէջ ուսանողը ենթակայ էր ծանր ծանր լուծերու, և հաճոյքը զոր կը փնտռէր ուսուցիչը, ուսանողին կրած ճպտկումներուն և անտանելի չարանքներուն մէջ էր: Պօսիւէյի երբեմն բարեկամ և ապա հակառակորդը չուգեր երբեք ճնշել և ենթարկել միտքն ու կամքը որ եւ է բացարձակ հեղինակութեան մը տակ: Այնքան լաւատես էր որ խոր համոզումի շնչտերով կը յայտարարէ. « Դաստիարակութեան մէջ դժուարութիւն չկայ. բոլոր մետաղները՝ ոսկի, եւ բոլոր ծաղիկները վարդ են »: Բարոյական կրթութեան համար էն լաւ և ազդեցիկ միջոցը, օրինակներով տրուած խրատը կը համարէր, որուն համար երկասիրեց իր առակները: Վերջապէս այս մեծ վարպետին ջանքն էր տղուն մէջ իր կոշումին բնազդը արթնցնել, եղբայրական սիրոյ սկզբունքը սերմանել, վերաբերումի բարոյական օրէնքները սորվեցնել, խոչերն ու խութերը ջնջելով

խաղի ընթացքին մէջ միտքը զարգացնել : Իր համոզումն էր թէ դաստիարակութիւնը ընդհանրական եւ ղեկն ալ կառավարութեան ձեռք ըլլալու է, եկեղեցւոյ հետ համերաշխութեամբ : Քաղաքական եւ կրօնական ուժեր, փոխադարձաբար ազատ՝ բայց կրթական խնդրին մէջ համախոհ ըլլալու են, անանկ որ ժողովուրդը՝ կղերին առաջնորդութեամբ դառնայ պետական առանցքին շուրջ :

Մ. Ս. ՈՐԲԵՐԵԱՆ



ԾԱՊԱԿԱՆԵՐՈՒ

ԼԵԶՈՒՆ

Բ.

Բաղեղ. — (Liere սարմաւերզ) Յարում. — Բաղեղը, կ'ըսէ Պէռնարուէն տը Սէն Բիէռ, որով երբեմն կը պսակէին մեծ բանաստեղծները՝ որ անմահութիւնը կուտար. երբեմն իր տերեւներովը կը ծածկէ ամէնամեծ ծառերու բունը : Ասիկա զօրաւոր ապացոյցներէն մէկն է՝ բնութեան բուսային համակշիւթիւններուն, որովհետեւ չեմ'յիշեր երբէք տեսած ըլլալ զանիկա շաճիներու, եղեւիներու եւ ուրիշ ծառերու բուններուն վրայ՝ որոնց տերեւը ամբողջ տարին մնայ : Միայն անոնց վրայ կը փաթտուի՝ զորս կը մերկացնէ ձմեռը : Խորհրդանշան վեհանձն բարեկամութեան, որ միայն թշուառներուն կը փակչի, եւ երբ մահը նոյն իսկ հասած է իր պաշտպանին՝ զանիկա կը վերածնէ, զարդարելով ծաղկեպսակներով՝ եւ յաւիտենական առաքինութեան մը գրասանգներով :

Բրաբիոն. — (Tubéreuse) Հեցուսիւն. — Բրաբիոնը Պարսկաստանէն Եւրոպա բերուած է 1632ին : Անոր հոտը շատ զօրաւոր է եւ կրնայ նոյն իսկ շնչահեղձութիւն պատճառել : Ասիկա սոխաւոր գեղեցիկ բոյս մըն է, ցօղունը՝ չորս-հինգ ոտք. տերեւները նեղ, երկար, փողածեւ եւ գորշ կանանչ : Հոտեղինաց գործարանները կը գործածեն անոր իւղը՝ օծանակի եւ անուշահոտ ջուրերու համար :

Բրաբիոնը եւ հովտածաղիկը՝

կը շրջապատեն իր հրապուրիչ եզրերը :

ՏԲ. ՊԵՌԵՆԻՍ

Նոյն բանաստեղծը այսպէս կը նկարագրէ յուզումը երիտասարդ աղջկան մը՝ որ Բրաբիոնի բոյրովը գինովցած է :

« Իր բազուկներուն մէջ կը սեղմէ վայն անխոհեմը. երբ իսկոյն բռնուած քաղցր մեղկութենէ՝ մը՝ իր բազուկները կը կթոտին երջանկութեան բեռին տակ : Այս անծանօթ յուզումէն ստադողած, կ'ուզէ խուսափիլ սլաքներէն Աստուծոյ. որ զանի հրապոյրով լեցուցած է. բայց աւաղ, իր մաքառումները կը փոխուին հաճոյքներու, իր վախերը յոյսի :

« Եփոթած՝ ան կ'իյնայ իր շղթաներուն մէջտեղ՝ հմայք մը՝ տկամայ կ'ընկերանայ իր վիշտին։ Ատել պիտի ուզեր՝ միայն սիրել կրնայ. իր սիրտը հանդարտութիւն կը փնտռէ եւ կը թողու բոցավառիլ ինքնին » :

Բոնբոն վարդ. — (Rose pompon) Ենոքի տղայական. — Բոնբոն վարդը՝ վարդերու ամէնէն սիրուն տեսակներէն է, բայց մանաւանդ ան՝ որու վրայ կրնանք ըսել Մալէրպի հետ.

(Եւ ինքն ալ վարդ մը ըլլալով՝ ապրեցաւ վարդերու կեանքը, Մի միայն առտու մը) :

* * *

ԶԳԱՅՈՒՄԸ ԲՈՅՍԵՐՈՒՆ ՄԷՋ

Կեանք ըստած երեւոյթը՝ որ բազմատեսակ փուլերով կը ցուցադրուի մեր առջեւ, այնպիսի խորհրդաւոր կողմեր ունի, մութ անդունդներու պէս. զորս լուսաւորելու համար տակաւին արդի մարդկութիւնը չա՛տ յոգնութեան պէտք ունի :

Այս մութ, խորհրդաւոր խնդիրներու կարգին կը պատկանի բոյսերու կեանքի խնդիրն ալ :

Ահա՛ մարդերը, ահա՛ կենդանիները, ահա՛ բոյսերը, Մարդկային տկար գիտութիւնը կը սորվեցնէ որ ասոնք գործարանաւոր մարմիններ ըլլալով՝ կ'ապրին. բայց այս վերջիններուն՝ բոյսերուն վրայ՝ զգացումի եւ իրենց վիճակին գիտակցութեան գոյութիւնը կ'ուրանայ :

Հին աշխարհի փիլիսոփաները, ինչպէս Բլաթօն, Արիսթօտ եւ ուրիշներ, կ'ընդունին գոյութիւնը նախնական նիւթի մը՝ որ կը շարժի ինքնին եւ ասիկա՛ է որ կը շարժէ ու կը յուզէ, ինչ որ կը շարժի ու կը յուզուի բնութեան մէջ։ Տակաւին ասիկա պարզ ազդակ մը ըլլալէ աւելի՝ տիեզերական հոգի մըն էր աշխարհի։ Կենդանիները՝ ունենալով իրենց մէջ՝ այս նիւթէն՝ զգայուն էին մարդերուն պէս, եւ այս նիւթին զգայական գորութիւնովն էր որ կը գործէին անոնք :

Բոյսերն ալ պատկանելով կենդանական հսկայ աշխարհին՝ քիչ ու շատօտուած էին այս նիւթովը՝ որու գորութիւնը բացայայտ կը նշմարուէր անոնց ունեցած կեանքին մէջ. որովհետեւ բոյսերն ալ կենդանիներուն պէս կը ծնին, կ'աճին, կը սնանին կերակուրով՝ եւ նոյն իսկ կ'ընտրեն իրենց սնունդին տեսակը, կը մարսեն՝ եւ զուտ նիւթին կը վերածեն, կը շնչեն ու կ'արտաշնչեն :

Այս իրողութիւններն էին որ համոզած էին նախնի ժամանակներու այն մարդերը՝ որ բնութիւնով կ'զբաղէին՝ անոր գաղտնիքին թափանձելու համար, թէ՛ բնութեան մէջ կար տիեզերական հոգի մը՝ որ կը տարածուէր կենդանիներէն մինչեւ բոյսերուն մէջ, առաւել կամ նուազ համեմատութիւններով, եւ որ սակայն տարբեր էր մարդուն հոգիէն, անով որ իր կարողութիւնները միայն նիւթական գործողութիւններու մէջ սահմանափակուած էին :

Ընդունելով այս կէտերը՝ անտրամաբանական չպիտի ըլլայ, եթէ ըսենք թէ՛ բոյսերն ալ իրենց վիճակին գիտակցութիւնը ունին, կամ աւելի լաւ՝ անոնք ալ ապրող էակներ ըլլալով՝ ունին

զգացում մը՝ որ խեղդուած կ'ապրի անոնց մէջ՝ իր գոյութեան ապացոյցները տալով յաճախակի :

Առնենք խեղանդամ մարդ մը՝ որուն աչքերը չեն տեսներ, ականջները չեն լսեր, բերանը չի խօսիր : Կրնա՞նք ըսել թէ ասիկա չըզգար. եթէ ուրանայինք զգացումի գոյութիւնը անոր վրայ՝ պիտի ուրանայինք նաև անոր ապրիլը. առանց զգացումի կեանք կրնա՞նք ենթադրել : Երբ ո՛ր եւ է կերպով մը ցաւցնենք այս մարդուն մօրմինը՝ անոր կը հաղորդուի ասիկա եւ կըզգայ ցաւոտ վիտ մը. բայց ի՞նչպէս արտայայտէ ասիկա՝ քանի որ բերան չունի՝ պօռալու, ձեռքեր ունի՝ որ անշարժ են. զգայութիւնը՝ որ շատ անգամ անասնձ է, հոգ կըստիպուի շղթայուած մնալ :

Բոյսերն ալ որ չունին արտաքին գործարաններ, ո՛չ լսելու, ո՛չ տեսնելու, ո՛չ շօշափելու, — գերագոյն ստեղծող զօրութիւնը ասոնք զլացած է անոնց — այնպէս կը թուի թէ՛ ո՛չ կը տեսնեն, ո՛չ կը լսեն, ո՛չ ձայն կը հանեն, եւ հետեւաբար՝ ո՛չ ալ զգացում ունին : Բայց պէտք է նկատողութեան առնել ճշմարտութիւն մը՝ որ կը տեսնուի հոս : Զգացումը՝ բոյսին մէջ, կր փոխուի ներքին զգայութիւններու եւ արդարեւ ասոնք կը նմանին կենդանիներու զգայութեան :

Զուկ մը՝ երբ ջուրէն հանուելով, տակաւին ողջ՝ դանակի հարուածներուն տակ կտոր կտոր կ'ըլլայ, կըզգայ ցաւ մը, բայց անիկա միայն ջղաձգական ցնցումներով կ'արտայայտէ ասիկա. իսկ ծառ մը՝ չի կրնար արտայայտել իր ցաւը՝ երբ անգութ փայտահարին կացինը՝ զինքը կը կտրէ կր ձգէ, որովհետեւ ո՛չ ձայնի գործարան ունի որ վիշտի ազդակ մը հասնէ. ո՛չ ալ ցնցումներով կրնայ արտայայտել ձուկին պէս : Բայց չէ՞ մի որ այդ ծառը կտրուելէն ետք՝ կը չորնայ, կամ կը դադրի ապրելէ. — ամէնէն մեծ ապացոյցը՝ անոր զգացումին :

Եւ տակաւին շատ մը իրողութիւններ կան՝ զոր եթէ լաւ ուշադրութեան առնենք՝ արդէն պիտի համոզուինք թէ՛ բոյսերն ալ զգայական գիտակցութիւն մը ունին իրենց վիճակին՝ եթէ ոչ խորհողական :

(Շարունակելի)

ԳԼԱԿ ԶԼՆԵՑ

Կը խնդրենք մեր Պատ. Գործակալներէն ու Բաժանորդներէն որ բարեհաճին կարելի եղածին չափ փութով կարգադրեն հաշիւներն՝ թէ բաժանորդագրութենէ և թէ զանազան յանձնարարութիւններէ առկախ պարտքերնին զրկելով :

Նոյնպէս կը խնդրենք որ անցեալ տարուընէ առկախ մնացած հաշիւներն ու բաժնեգինները զրկելու բարեհաճին : Կարծեք այսքան ներողամիտ վարմունք մը բաւական է :

ԽՄԱԳՐԱՊԵՏ - ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՏՊԱԿՐԻՄ - ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ԱՐՄԷՆ ԼԱԻՍԻՆԵԱՆ

ՆՇԱՆ. Կ. ՊԵՐՊԵՐԻՆԻ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Իգտամ լրագրին դէմ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՔԱԹԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վաճառականացի, 24 էջ՝

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ Համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վաճառականացի 12 օրու զաւտ առնել ուզողը պէտք է վճարէ 12 դրու:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼԻՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր

Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան

Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան

Դօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլիէրեան

Ներոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան

Նրզնկա, Պարոյր էֆ. Արզուման

Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճեանեան

Էրզնում, Տիգրան էֆ. Բրուտեան

Էրայա, Կարապետ էֆ. Դօճեան

Թեփրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան

Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան

Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան

Կիւրքն, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր

Հալեպ, Ս. էֆ. Ամատեան

Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան

Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան

Մարաշ, Արծ. Տ. Նէրսէս ԲՆ. Շաշինեան

Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան

Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան

Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան

Սամսօն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան

Սրվազ, Մանուկ էֆ. Պէլլէրեան

Սիւ հանի ֆէոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան

Վեզիր ֆէօրիս » » »

Տիւրքիս, Լեւոն էֆ. Սրապեան

Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Բանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգիրն եւ կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակագրոյժ դնել նամակին մէջ եւ նամակն ալ ապահովագրել (քահիլէս ընել), նամակագրոյժ կրող նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը չհասած ժամանակ, երբէք պատասխանատու չենք: